

Իսկ մեկը գիտենք, որ ամենայն կողմերից, և միշտ աւելի և աւելի բարձրագոյն, յուզվում է հետեւեալ հիմնական խնդիրը, որի ծոցից որ ծագում է նոյն իսկ ձրի հացի գաղափարը. «ի՞նչ անենք, որ արիւնքրախնքով աշխատող ժողովրդեանը մատակարարենք առողջ, ապահով, հանապազօրեայ, բաւականաչափ անվաշխաւելի հաց»։ Այս խնդիրը չի լուծուի որպէս ջոկ խնդիր, միւս ամենայն կապակցութիւններից զատուած։ Լուծուին անշուշտ չի կենդանացած միայն փոան մէջ, այլ աւելի բարդ հանգամանքներում պիտի փնտռուի։ Եւ թան, շատ է թան հաց պիտի մատակարարուի բայց այդպիսի հացը պէտք է առողջարար լինի, որ կարողանայ մարդկային մարմինը կատարելապէս սննդել։ Սակայն այդ հացը չպէտք է առաջ բերէ վարձի ծնում։ ապա ուրեմն նախ հարկաւոր է, որ անգործների բանակը լուծուի և ջնջուի, այսինքն որ աշխատող ձեռքերի չափազանց և պարապ առաջարկը վերջանայ։ Այս էլ կ'իրականանայ, եթէ կաշուածատիրութեան խնդիրը կանոնաւորուի, գիւղատնտեսութիւնը շարունակ կատարելագործուի, գաղթականութիւնը դադարի և ձեռագործութիւնը նորից ծաղկի։ Սրանց համար հարկաւոր են հողաբաժնի իրաւանց վերանորոգութիւն, աշխատութեան խելացի կազմակերպութիւն, արմատիքների գնի աճեցում, տնտեսականութեան բոլոր ճիւղերի աղգային կազմակերպութիւն, այս ամէնը սերտ կապ ունի այն իրողութեան հետ, որ աղգային տնտեսութիւնը ըստ չափու հնարաւորութեան անկախ դրուի համաշխարհական առևտրից, ընդ նմին արդիւնագործութեան արտադրութիւնների համար՝ բախտի շնորհիւ ու բախտախնդրութիւնը վերանայ, իսկ ամէնից առաջ պէտք է, որ ամբողջ գիւղական տնտեսութեան ղեկավարութիւնը հանուի արդի մեծագոյն ընկերական և տնտեսական իշխանութիւնից—այն համաշխարհային մեծ գրամագլխի ձեռքից, որի փիթխարի աշխատութիւնը հասարակօգուտ տնտեսական բարգաւաճութիւն նպատակ ունենալ չի կարող, և նոյն ղեկավարութիւնը այսուհետեւ գրուի աւելի ձեռնհաս՝ այն է հասարակաց ինքնավարութեան մարմինների ձեռքի մէջ։

Արդ այս ուղղութեամբ ընթացող, օրհնաբեր, ազդեցիկ և աւելի իրագործելի քայլերից մէկն է—աղգին հաց մատակարարելը հասարակութեան ձեռքով. «տոմեալներին կերակրելու պարտականութիւնը համապատասխանում է ամենայն մարդու ապրելու բնական իրաւունքին»։

(«Das Leben» Լուամենայ հանդիսից)։

Ս. Մ.



ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Բնակարանի հետաւորութիւն և երկանիս. Բաղդաքի հետու տների մէջ բնակելու վարձողներ գրաւելու համար՝ այժմ՝ Եւրոպայում հետեւեալ հարն են գործ դնում։ Ցանտէրը այդպիսիններն տալիս է մի մի է թամազին (155 մարկ արժողութեամբ), բայց հաստատուն երկանիւ։ Այս արժէքը վճարվում է շարաթական 1 մարկ շնչին հատուցումներով։

Աղի հարկը Գերմանիայում. Յայտնի է, որ աղի հարկը մեծ ծանրութիւն է ժողովրդեան համար, ուստի և շատ երկիրներում, զոր օր. Ռուսաստանում, ժողովուրդը ազատուած է այդ հարկից, Գերմանիայում, ուր որ աղի արտադրութիւնը շատ է թան է նստում՝ անհամեմատ մեծագումար աղահարկ է հաւաքվում — մօտ 46 միլիոն մարկ (Գրանտիայում 6 միլիոն, Աւստրիայում 35 միլիոն), Բայց զարմանալին այն է, որ այդ տեղ մարդ աւելի աղահարկ պիտի վճարէ, որքան աւելի աղքատ լինի։ Այս բանը բացատրվում է այն հանգամանքով, որ աղքատ դասակարգի կերած ուտելիքը ամէնից աւելի աղ է պահանջում։ Գերմանացին առաւելապէս գետնախնձոր է ուտում և իհարկ է հետն էլ շատ աղ, Ընդհանրապէս, հաց, բրինձ մարսելու համար աւելի քիչ աղ է հարկաւոր, քան գետնախնձոր մարսելու։ իսկ հարուստների համար կերակուրների մէջ ամէն տեսակ համեմունք և անուշեղէններ կան, բայց ամէնից պակաս — աղ, Հարուստը տարեկան հազիւ 8 գրուանքայ աղ է գործածում, իսկ աղքատը աւելի քան 32 գրուանքայ. նա վճարում է 48 պֆենիգ աղահարկ, իսկ սա 180 պֆենիգ։

Անտառ և կիլոպայ։ Վաղուց տարածուած է այն միտքը, թէ անտառները բարեբար ազդեցութիւն են գործում կլիմայի վերայ, սնուցանում են գետեր, թուլացնում են երաշտութիւնը և այլն։ Այժմ Էնգէլհարդը վարդապետում է, թէ այդ գաղափարը ոչինչ հիմք չունի և սխալ է։ Նորահայեցմամբ այդ գաղափարը կազմուել է սխալ գաղափարութիւններից, Ասում են, թէ «անտառները մթնոլորտը հովացնելով՝ ջրի գոլորշիքը քարշում են դէպի մերձաւոր վայրերը և այդ տեղ աճեցնում են անձրեւների քանակութիւնը»։ Բայց ճիշդ գիտողութիւններով արդէն ապացուցուել է, թէ անտառները անձրեւի քանակի վերայ չեն ազդում և թէ անտառի մէջ և անտառից դուրս նստող ջրի քանակը հաւասար է։

«Անտառները պահպանում են օդի ջերմութեան և խոնաւութեան բարեխառնութիւնը»։ Բայց դարձեալ ապացուցուել է, թէ օդի ջերմութեան և խոնաւութեան փոփոխութիւնները զգալի զանազանութիւն չեն երեւցնում անտառի մէջ և անտառից դուրս։

«Անտառները բարձրացնում են գետնի տակի ջրերի մակերևոյթը և այդպէս ջուրը աւելի մատչելի են դարձնում բոյսերի համար: Իսկ հետազոտութիւնները ակնյայտնի ցոյց տուին, թէ անտառները գետնի ջրերի մակերևոյթը իջեցնում են, որով բոյսերից խլում են հիւթի այն պաշարը, որնոցա հարկաւոր է երաշտութեան ժամանակ: Այլ հետազոտութիւններով յայտնուեցաւ, որ դաշտերում գետնի ջրերի մակերևոյթը անհամեմատ աւելի բարձր է, քան անտառի մէջ, և ուրեմն ոչինչ հիմք չկայ կարծելու, թէ անտառը ջրեր հաւաքող է: Եթէ երաշտութեան զլխաւոր պատճառներից մէկն է գետնի ջրերի մակերևոյթի ցածուցումը, ապա հարկ է եղրակացնել, թէ դաշտերի մէջ անտառ սնկերը և սասկացնիկ (և ոչ թէ կը թուլացնէ) երաշտութիւնը, կանցնիկ (և ոչ թէ կը շուրջապահէ) կողի ամրոյթները:

«Անտառները պահպանում են գետնի խոնաւութիւնը»: Նոյնօրինակ հետազոտութիւնները ապացուցին, թէ անտառները ցամաքեցնում են հողը, թէ ծառերը գետնից հիւթը գուրս ծծելու ջրհաններ են: Ամենից աւելի ջուր է գոլորշիացնում անտառները անտառը, յետոյ սաղարթածածկ անտառը, և ապա մարդագետները, ամէնից քիչ է գոլորշիացնում և հիւթ լաւ է պահում արտն ու հանգիստ թողած անտառը:

«Անտառների պատճառաւ ձիւնը դանգաղ է հալչում, որով աղբիւրների սնանումը կանոնաւորվում է»: Բող այդպէս լինի, բայց նոյն անտառները պակասեցնում են գետնի տակի ջրերի քանակութիւնը, որով որ սնանվում են աղբիւրներն ու գետերը: Մի երկրի անձրևներից անտառը աղբիւրներին և փտակներին մատակարարում է — 30 — 40 տոկոս պակաս ջուր: Քան վարելահողը, կամ ուրիշ խօսքով, եթէ գետերի ակունքները շրջապատուած լինին արտերով, գետերը աւելի լաւ կը սնանին, աւելի շատ կը ստանան մթնոլորտից նստած հիւթեր: Քան եթէ անտառներով պատած լինէին, Գետնի հիւթերի նկատմամբ անտառները ոչ թէ օգնական են գետերին, այլ նոցա ախտան:

Աերջիվերջոյ անտառների ներգործութեան մասին այս երեք կէտերը անհերքելի են. 1) գետները լցացնում են. 2) մակերևոյթը ցածացնում են. 3) գետնի ջրերի քանակութիւնը նուազեցնում են:

Արեւայգի—Բարդուի: Ըուեղացոց թագաւորի երկրորդ որդին՝ Օսկար Եկնադոտտէն, խիստ սիրում է քարոզ կարգաւ և Ստոքհոլմ եկած ներքնների մի խմբի առթից օգտուելով խօսեց այդ Ափրիկացոց առաջ մի հոգեւոր քարոզ, Հայրը շատ անգամ յանդիմանել է երիտասարդ արքայազնին, որ յաճախակի որպէս քարոզիչ հրապարակ է գուրս գալիս: Բայց հակառակ բազմիցս խոստ-

ման՝ արքայազնը չի կարողանում իրեն զսպել և դարձեալ շարունակում է հետեւել իւր ներքին կոչման:

Չրի քաղաւր: Զուիցերիայի զանազան քաղաքներում օրենքով հետզհետէ մտնում է ձրի թագման կարգը: Համայնքը յանձն է առնում ձրի տալ զագաղ, մի միաձի յուղարկաւորութեան կառք, մի հասարակ երթեւեկութեան կառք՝ դարձեալ միաձի և ձրի հոգալ թագման բոլոր կարգերն ու արարողութիւնները: Իսկ աւելի ճոխ պահանջների համար կազմուած է մի սակագին բաւական մեծ վճարներով, եթէ պահանջները խիստ փարթամ լինին, պահանջող պէտքէ վճարէ թագման ամբողջ ծախքը:

Գագաղի պատկեր: Հին ժամանակներից և շատ աղբերի մէջ գեղեցիկ ոսկորութիւն է տարածուած — հանգուցեալներին ծաղիկներով և դալար ոստերով յուղարկաւորել մինչև գերեզմանը, և ապա այն տեղ նաև մի բուրաստան ծաղիկեցնել: Սգաւորն այս տեղ կեանքն ու մահը անբաժան միացած է իմանում և զգում մահու դարհուրանքը՝ վարդերով ամօքած է տեսնում: Այս բոլորի հետքն անգամ չի երեւում այսօրուայ պսակ գնելու տեղը, անտանելի և հակակերելի յոռութեան մէջ, չար սովորութեան մէջ, եթէ մի ազգական, բարեկամ կամ ծանօթ մեծն, նորասիրութիւնը պահանջում է, որ կենդանի մնացածներին միութեամբ համար մի պսակ յուղարկուի դագաղին դնելու: Եւ որովհետեւ այս մի նորութիւն է, ուստի և պսակների ձևերը ամենայն օր աւելի և աւելի անճշակ, խայտառղէտ, մինչև ծիծաղ շարժող և չափազանց աւելորդութիւն են դառնում: Եւ ի՞նչ է այսպիսի մեծագնի շոյալութեան տպաւորութիւնը: Արդեօք պսակի թիւը մէկ լինի, թէ երեք, թէ տաս — տրամած օրտի գեղասիրական զգացումը երբեք չի սնանուի պսակների գեղից, թերևս փաղաքշէ միայն նորա ունայնասիրութիւնը: Պսակի ձևն անգամ ինքն ըստ ինքեան մի սիրուն բան չէ: Իսկ սգաւորի դառնութեան մէջ այդ պատճառով մի տանջող զգացմունք է աւելանում. ամէն մի նոր առաքած պսակը նորա վերայ պարտք է գնում, որ համանման գէպքում ինքն էլ փոխարինէ առաքողին: Եւ այդ հոգսը այնքան չոր ու ցամաք գործ է կալմում, այնքան կարեկցութիւնից թափուր ձևակատարութիւն է դառնում, որ սուղը փոխվում է ձանձրութիւն և զայրութիւն: Պսակը ոչ թէ ցաւակցութիւն է, այլ մարդու սիրտը ցամաքեցնում է, մարդկային բարքը բրտացնում է: Մասնակցողը վճարում է 5 մանէթ, 10 մանէթ, կամ աւելի ևս, որովհետեւ նորասիրութիւնից բռնադատվում է, և ուրեմն իւր կարեկցութիւնը արտայայտում է իսկ և իսկ այժմեւութեան համեմատ՝ մանէթների քանակով, զբամական արժէքով:

Ոչ որ չի ուզում յետ մնալ միւսից, ամէնքը աշխատում են աւելի ճոխ պսակ պատուիրել: Սակայն շատերի համար այս ծախքը ճշող հարկ է. անակնկալ կերպով 5, 10 կամ 100 րուբլի պարտաւորուած լինել վճարելու—այն ևս ոչինչ բանի համար, ամէն մարդու զուարճութիւն չի լինի մանաւանդ որ ամէնքն էլ զգում են, որ անտեղի վատնութիւն է դա՛կեղծաւորութիւն: Այս յոռութիւնից ամէնքը դարձում են ամէնքն այս անկարգ բան են համարում: Բայց ոչ որ չի համարձակվում առաջին քայլ դորձել անոր վերջ տալու համար: Թէպէտ Եւրոպայում ոմանք մահագոյծ յայտարարութեան մէջ այս տողն էլ տպագրել են տալիս. «պսակների ձօնից շնորհակալութեամբ հրաժարվում ենք»: Բայց այս հնարը լաւ միջոց չէ ձանձրութիւնից ազատուելու համար: աղին սրտերի կենդանի ցաւակցութեան համար վիրաւորիչ է այդպիսի սառը հրաժարումը: որի մէջ կարծես թէ մի ուրիշ ձայն ևս լսվում է: թէ «Մենք էլ այդ պատճառով պսակ չենք տալիս»:

Ահա այս և ասոր նման տրտուկներ են լըսվում պսակների դէմ Եւրոպայում: որտեղից որ մեր մէջ ևս մտել է հանգուցեալների յիշատակը պսակով պատուելու սովորութիւնը: Ուստի և զանազան հնարներ են փնտռում պսակների ծախքը կանոնաւորելու համար: Մէկը այսպիսի առաջարկութիւն է անում. թող, ասում է նա, մահագուշակ յայտարարութեան տողերին կցեն նաեւ հետեւեալ ծանօթութիւնը. «Խնդրում ենք պսակների համար մտադրած ծախքը շնորհել (այսանուն) բարեգործական ընկերութեան»: Իսկ ով իւր մարդկանց փառասիրութիւնը ճանաչում է, մինչև անգամ կարող է աւելացնել. «Շնորհողների անունները կը տպագրուին (այս ինչ) լրագրի մէջ»: Պամ բարեգործական ընկերութիւնները թող պատրաստել տան զեղանկար քարտեր այսպիսի տողերով. «Տիկին կամ Պարոն Ա. նուիրեց ստորագրող ընկերութեան յօգուտ աղքատաց խրուիլ»: Տիկին կամ Պարոն Բ. մահուան յիշատակի առթիւ: Ընկերութիւնը այս քարտերը սգաւորների տունը կ'ուղարկէ: Միթէ այս կարգադրութիւնը նուա՞ղ միութարութիւն կ'լինի. միթէ այրող վէրքի համար հովացնող բալասան չի՞ լինի, երբ հաւատացած ես թէ մի քանի աղքատ և նեղացած մարդկանց հոգսերն ու ցաւերը կը դարմանուին, թէ մի քանիսի արտասուքներ կը ցամաքին.— Անշուշտ այս բանն էլ մրցում կ'առաջացնէ, բայց այս կը լինի մի աղնի նախանձաւորութիւն—գէթ ըստ հետեւանաց, Մենք կարող ենք մարդկանց գործողութեան շարժառիթների մասին փոյծ չունենալ, այդ մասին թող իւրաքանչիւրը ինքն իւր հաշիւը տեսնէ: Եթէ մարդիկ պէտք ունին նորասիրութեան թող բարեարութիւնն էլ մի նորասիրութիւն դառնայ:

Այս ամէնը հարկաւ չի հակառակում, որ

հանգուցեալի մերձաւորներն ու սիրելիները, ամուսինը, զաւակները և ծնօղները՝ զագաղը կենդանի ծաղիկներով և դալար ստերով զարդարեն: Այս բանը կրած ցաւերի մի արտայայտութիւն է: սիրոյ վերջին նշան է: մի լեզու է առանց բառերի, մի անխօս միմունջ է: Եւ այսպիսի ձօնը երբէք չի անցնի բուն աղնութեան, զեղեցիկութեան, անկեղծութեան սահմանից:

† Կոմս Յովհաննէս Պիլիանեան. — Դեկտ. 29-ին վախճանուեցաւ Պետերբուրգում և յունուարի 3-ին պատշաճաւոր հանգիստով թաղուեցաւ Հայոց զերեկմանատան եկեղեցւոյ մէջ՝ իւր սոհմակիցներէ մօտ: Պառնայ լուսաւորութեան նախարար, հայագրի կոմս Յովհաննէս Պիլիանեան:— Ինչպէս պ. Ա. Երկեւանի մի յօդուածից * տեղեկանում ենք, հանգուցեալ կոմսի պապը՝ Յարութիւն Պիլաքեանց անցեալ դարի սկիզբներում գաղթել է Նոր-Ջուղայից և բնակութիւն հաստատել նախ Աստրախանում, ապա Մոսկուայում: որտեղից տեղափոխուել է Պետերբուրգ: Այստեղ նորա Գաւթի ուղու, որ ղինուորական ծառայութեան մանելով զանազան պատերազմների մէջ նշանաւոր է հանգիստացել և գեներալ—մայորի աստիճան ստացել:— Լազարեան Յովակիմ աղայի Գարիամ դուռեր ամուսնութիւնից, 1818 թ.-ին ծնուել է Յովհաննէս Պիլիանեանցը: Ուսումն աւարտելով Մոսկուայի համալսարանում՝ հանգուցեալը շատ արագ յառաջ գնաց քաղաքական ծառայութեան մէջ և հռչակ ստացաւ ուսումնական աուպարիզում: Իւր ամենահատարակմ ծառայութեան համար նա վարձատրուել է հեղդհեմե ըտր կարգի շքանշաններով՝ մինչև ամենաբարձրը, ս. Անդրէի ազամանդադարդ խաչի նշանը: և ստացել կոմսի կոչումն: Լուսաւորութեան նախարարի պաշտօնը վարում էր նա 1835 թ.-ից ի վեր: Հանգուցեալը կին էր աւել Լազարեան նշանաւոր տոհմից, բայց մեռաւ անգամակէ թողնելով կայք իւր ազգական իշխան Ս. Արամեիլը—Լազարեանին:

Մոլոգինի ծննդեան 80 ամեայ արեւոյսը Գերմանիայում. Գերմանիայի ամբողջ գիտնական աշխարհը անցեալ նոյեմբերի 30-ին փառաւոր կերպով տօնեց նշանաւոր գիտնական—պատմաբան Մոլոգինի ծննդեան 80-ամեայ տարեդարձը. Յարգելի ծերունին մի տիպար կարող է համարուիլ այն քաջատող Գերմանացի գիտնականների, որոնք աշխատում են անխոնջ կերպով մինչև խորին ծերութիւն: Քիչ չէ եղել այդպիսի ծերունի գիտնականների մասնա-

* Արձագանք 1898 թ. 2.

ւորապէս պատմարանների, թիւը մօտիկ անցեալում: Գեօլինգեր մեռաւ 90 տարեկան հասակում: Քանկէն—91, Աուրցը—81, Աուրցիուսը—83, Զիրէլը—80 տարեկան զեռ կենդանի է: Եւայն, Ի^անչ բանի վերագրել այս երկարակեցութիւնը: Ռուսաց լրագիրներից մէկը, ի նկատի առնելով Ռուս գիտնականների սակաւակեաց լինելը՝ պատճառ համարում է այն, որ նորա զեռ երիտասարդական հասակում ջլատում են իրենց ոյժերը զանազան պարտադիր շարագրութիւններ գրելով: Գիտնական աստիճաններ ստանալու համար, և առաջարկում է փոխել այդ կորստաբեր ուղղութիւնը: Սակայն Գերմանիայում ոչ միայն դոկտորական և մագիստրոսական շարագրութիւններ են գրում, այլ և տասնեակ հատորներով գրքեր, բայց և այնպէս մինչև 80—90 տարի ապրում են, չը թողնելով ձեռքից գրիչը մինչև վերջին շունչը: Պրոֆեսոր Մոմզէնը «Հռովմէական պատմութեան» ամենայայտնի հեղինակն է, որ աչքի է ընկնում ոչ միայն արտաքոյ կարգի հմտութեամբ, այլ և չափազանց զեղարուեստական լեզուով: Նա ապրում է Լարցօտենըրդ փոքրիկ քաղաքում (Բերլինի արուարձան) և չընայելով իւր 80-ամեայ հասակին, զեռ ևս աշխատում է Հռովմէական իրաւաբանութեան վերաբերեալ մի մեծ երկասիրութեան վերայ: Քաղաքի բոլոր բնակիչները պաշտում են «փոքրիկ ձերմակ պրոֆեսոր»-ին, Գերմանիայի պարծանքը տեսնելով նորա մէջ:

* * *

Օղիի գործածութիւնը Ֆրանսիայում. Անցեալ տարի Ֆրանսիայում աւելի շատ օղի է գործածուել, քան ամբողջ աշխարհում (170,000 հեկտոլիտր), Իւրաքանչիւր մարդուն տարեկան ընկնում է 14 Լ օղիից ըմպելիք: Ապացուցուած է, որ զժանոցների բնակիչների $\frac{1}{3}$ մասը օղիից ըմպելիքներից են յիմարացել: Ժողովրդական կեանքի այս հզօր թշնամու դէմ որ Ֆրանսիայում 30 տարի առաջ հաղիւծանօթ էր, թէև մասնաւոր անհատներ կոխ մղել են, բայց զեռ ընդհանուր օրէնքներ չեն հրատարակուած:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒ:

Նորին Ս. Օծութիւն Ղեհափառ Հայրապետ անցեալ զեկտեմբերի 24-ին մեկնեց ս. ԼՅմիածնից դէպի Տիփլիս, ինչ ինչ կարևոր գործերի մասին անմիջական ներկայութեամբ հօգալու համար: Ուղևորուելուց երկու ժամ առաջ ս. ԼՅմիածնի միաբանութիւնը բաղդունեցաւ ներկայանալու Նորին Սրբութեան և հրաժեշտի օրհնական ողջոյններն ընդունելու: Ղեհափառ Հայրապետ յիշեց թէ ինչպէս իւր բաղմայեղ կեանքի ընթացքում շատ անգամ առիթ է եղել յատկապէս տարուայ այս անպատեհ եղանակին ճանապարհորդելու, բայց ինքն, ինչպէս ամեն անգամ, այս անգամ ևս յօժարութեամբ հպատակում է Նախախնամութեան կամքին և այս դժուարակիր ուղեգնացութիւնը յանձն առնում: Դէպի ս. եկեղեցին և իւր սիրեցեալ հօտն ունեցած պարտքը վճարելու ձգտումով, Յորդորեց ապա սիրով կտալուած մնալ, ինչպէս իւր, այնպէս նաև միմեանց հետ: Աւետարանի սիրոյ օրէնքը ճանաչել միշտ իբրև միակ ճշմարիտ զեկալար և ամենայաղթ զօրութիւն, աղօթիկ իւր համար, որպէս զի Ամենակարող Երկնաւոր Հայրը առաջնորդէ հասնելու առաջ զրաւ նպատակին և ողջամբ վերադառնալու Մայր Աթոռ:

Միաբանութիւնից յետոյ Նորին Ղեհափառութիւնն ընդունեց զանազան կարգի ժողովրդականների և ապա Ծեմարանի ուսուցչական խմբին և աշակերտներին՝ յորդորելով վերջիններս իրենց կեանքի այս բաղաւոր տարիներն արդիւնաբեր անել, հնազանդ մնալ և սիրել իրենց դատարարներին և ուսուցիչներին, իսկ ուսուցչաց մաղթելով ոյժ և